

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈԺԼԱՎՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏՍՍԱՀԱՄԱՆ

Ստորագրողի մէկ օրով

Տարեկան 14 ֆր.


Վ. ցամաքայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Ծառացի տողը

20 սանթիմ

ՀԱՍՏԻ

Réduction du Journal

«Travounk»

VARNA (En garie

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ир вунк»

ВАРНА

Գրադրուք եւ լին

տրուիր

ԱՐՁԱԿՈՒՄ

Ինչպէս որիչ անգամներ, այս տարի եւ ամառուան առթիւ 15 օրի չափ արձակուրդ պիտի ընենք, որով իրաւունքի հրատարակութիւնը պիտի ընդհատուի քանի մը թիւ, և այդ միջոցին մենք առիթ պիտի ունենանք Պուրկազ — Ֆիլիպէ — Սօֆիա գծին վրայ քանի մը քաղաքներ այցելելու:

ՀԱՅՏ ԲԱՂԱՔԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Բ.

Մեր յօդուածի առաջին մասով եզրակացուցինք թէ թուրքիոյ բարեկամութեանը չէ կարելի վստահել, ցորչափ կ'Պուսոյ գահուն վրայ կը նստի Սուլթան Համիտ մը կամ նոյն հայեացքները ունեցող ուրիշ թուրք մը: Ազատական ժէօն թուրքերու վրայ ալ մենք վստահելի ոչինչ կը տեսնենք տուայթմ: Մինչև ցարդ հրապարակի վրայ երեցած ժէօն թուրքերու պետերը և առաջնորդները լուրջ գործունէութիւն մը ցոյց չտալէ վատ, իրենց լեզուի ու դրօշի հերոսութեանց առարկայ ըրած են աւելի հայկական համեստ պահանջները — Հայաստանի բարեկարգութեան խնդիրը — քան համիտական ռէժիմի վարադութիւնը: Այս մասին ալ եթէ խօսած են, միշտ իրենց նպատակակէտը եղած է թուրքերու կրած զրկանքը այն աստիճան խոշոր ցոյց տալ որ հայերու քաջած անօրինակ տառապանքը և բիւրաւորներու կոտորածը մոռացութեան տրուի: Մուրատ պէյ արտասահմանէ Պուլիս վերադառնալէ յետոյ միակ ճշմարտութիւն մը յայտնած էր, ըսելով թէ, «Հայոց կոտորածին յաջորդող արտասահմանի հայանպաստ շարժումը չեզոքացնելու նպատակաւ էր որ եւրոպա և եգիպտոս անցայ ու ազատական պայքարի սկսայ իսկ իրականութեան մէջ, ըստ սրբա-

զան օրինաց, միշտ և միշտ թագաւորինն է. ուզածին պէս տնօրինելու բացարձակ իրաւունք ունի»: Դիմակաթափ եղած ժէօն թուրքի մը դաւանանքն է այս: Ահմէտ Րիզա եւ ուրիշ պետեր ալ երբ դիմակաթափ ըլլան ներկայ Սուլթանին սատկելէն յետոյ, միևնոյն զգուշի դէմքը ցոյց պիտի տան, թէն Ահմէտ Րիզան արգէն իր դիմակին տակէն ալ ճանչցուած է. իսկ ժէօններու էն ազնիւ ներկայացող պետը ևս չը կրցաւ իր թիւթը թուրք մը ըլլալը պարտել վերջին անգամ, երբ նշանաւոր իւր պացիներու կողմէ ստորագրուած հանրագործութիւնը ներկայացաւ Մ. Բօզլէյլիին:

Ժէօն թուրքերու բուն հիմնադիրին, Մեհմետ փաշային, եթէ վեհաբառնանք, ձգելով իր արդի շառաւիղները, անոր բուն նպատակը կը գտնենք իսլամ տարրին մէջ խեղդել ու ցուլել երկրին քրիստոնեայ ցեղերը: Մեհմետ երբ Ռուսչուքի վաղի էր, գրէթէ ամէն օր քանի մը պուլկարներ ծառերէ կ'ախել կուտար: Մէկ խօսքով մենք շատ տարբերութիւն չենք տեսնել հին և նոր թուրքերուն միջև: Այս ցեղը առանց համիտական ռէժիմին ենթակուած ըլլալու՝ կովկասի մէջ ալ իր վայրենաբարոյ և գազանային բնազդները ցոյց տուած յարձակելով հայերու վրայ՝ երբ հաւատաց թէ տիրող կառավարութիւնը զիրենք պատժելու շատ տրամադիր չէ, եւ կովկասի թուրքը, ինչպէս բոլոր թուրքեր, միայն այն ատեն իր յարձակումներէն հրաժարեցաւ երբ իր գէմ առնական դիմադրութիւն տեսաւ: Հաշտութեան պայմանները կամ Տօք. Գաբրիէլեանի երեւակայած «հաշտ քաղաքականութիւնը», թափօրները ու երդումը բնաւ նշանակութիւն չունեցան ու չեն ունենար թուրքին համար, երբ տեսնէ թէ բիրտ ուժի տեսակետով ինք զօրաւոր է:

Հետեւաբար ահագին սխալ մը գործած պիտի ըլլանք, եթէ մենք հաշտութեան պայմաններու վրայ յոյսերնիս դնելով, երթանք թուրքին անձնատուր ըլլանք, ըլլալան հին-թուրք կամ ժէօն-թուրք:

Գ.

Թուրքը այն ատեն միայն կը յարգէ կամ յարգել կ'ստիպուի հաշտութեան պայմանները գէմ մը տեսնէ գէթ իր ուժին հաւանորոշ ուժ մը: Մենք առանձինն այդ ուժը չենք ներկայացներ, ուստի անհրաժեշտ պէտք ունինք ուժեղ պաշտպանի մը կամ զինակցի մը, որ կարենայ անմիջապէս մեզ օգնութեան հասնիլ մեր երկրի խորքեր: Իւր այդ յատկութիւնը ու առ այդ հարկ եղած դիւրութիւնները մենք միմիայն Ռուս պետութեան քով կը տեսնենք:

Մեզ պաշտպան թուած եւրոպական պետութիւններու էն հայասէր և փայլուն ներկայացուցիչները մէկէ աւելի առիթներու մէջ մեզ Ռուսիոյ բարեկամութիւնը յանձնարարած են և սորչապէս ըսած թէ առանց Ռուսիոյ աջակցութեան իրենք մեծ բան մը չեն կրնար ընել ի նպաստ Հայոց:

Շատ աւաղելի պիտի ըլլար մեր վիճակը, եթէ Ռուսիոյ բարեկամութիւնը անդառնալիօրէն կ'ստանար ըլլալինք, կամ իլէվէ — Կալիցինեան քաղաքականութիւնը յարատեւութիւն ունենար Բարեբաղդաբար այսօր այդ կուսակցութեան քաղաքականութիւնը իր առաջնորդներովը միատեղ ջախջախուած է, եթէ հետեւորդներ կան տակաւին կովկասի մէջ, անոնք ալ իրենց օրհասական ճգնաց մէջ կը գտնուին: Սահմանադրական Ռուսիան եկած է մաքրել բռնապետութեան այդ թափթիւրքները:

Բայց պէտք չէ կարծել թէ սահմանադրական Ռուսիա մը անպատճառ հայ ազգին պաշտպան և թուրքին թշնամի պիտի ըլլայ:

Մեր վարժունքը ու մեր ազգովին հետեւելիք քաղաքականութիւնը մեծ դեր պիտի ունենա մեծ մասին Ռուսիոյ իր դիրքը սորչելուն մէջ: Տասնեակ տարիներէ իվեր մեր յեղափոխական կազմակերպութեանց անխորհուրդ վարժունքը Ռուսիոյ մէջ հայահալած քաղաքականութեան մը չեչտուելուն պատճառ դարձաւ: Նոյն օրինակ անխորհուրդ վարժունքներ ու սխալներ եթէ շարունակուին ինչպէս մինչև ցարդ կրնան սահմանադրական Ռուսիան ալ մեզ թշնամի դարձնել:

Այս օրեր Հայերու համար, և մասնաւորապէս Ռուսահայոց համար, թանկագին փափուկ օրեր են, և աւելի ճիշտը դարագլուխ մը օժտելու համար մեր ճակատագիրը Ռուսիոյ բարեկամութեամբ: Ռուսական հսկայ զանգուածը հալած կապարի նման այսօր նոր կազապարի մէջ պիտի թափուի ու ձուլուի: Այդ կազապար ինչ ձև ալ ունենայ, ինքնակալական: Սահմանադրական, կամ հանրապետական, մեզ այնչափ հետաքրքրելու չէ, այլ մենք ջանալու ենք ընդհանուր ռուս տարրին բարեկամութիւնը շահիլ և անհետացնել այն կասկածները թէ մենք անշատական նպատակներ ունեցած ըլլանք: և ռուս վարիչներու մտքին մէջ լաւ տպաւորելու ենք թէ, Հայերս ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս և ասկէ յետոյ լաւ աջակիցներ կ'ըլլանք Ասիոյ մէջ ռուս քաղաքականութեան և վահառականութեան ծաւալման, եթէ այս մեծ պետութիւնը վերադառնանք մեզ պաշտպանել իսլամ խուժանին և թուրք բռնապետութեան դէմ, այս վերջնոյն զինու ուժով գործադրել տալով հայկական մէկ քանի նահանգներու բարենորոգմանց ծրագիրը ընդ հսկողութեամբ գէթ Ռուսիոյ:

Ուր մնաց Համահայկական Համագործակցութիւնը խորհուրդը: Ո՞ր օրի կ'սպասուի վեհ. Կաթողիկոսը արգեօք անկարեւոր կը նկատէ այս էական գործը, որուն նախաձեռնողը ինք պէտք է ըլլայ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Թէոսոսիայի գլխաւոր մէջ փողոցին մէջ յունիս 20ին հայու մը ձեռքով սպաննուեցաւ Արուստով անուն հարուստ հայ վաճառականը։ Մարդասպանը բռնուեցաւ։ Սպանութեան պատճառն է եղբոր տեղական հայոց եկեղեցւոյ վարչութեան վեճէրը եւ երկպառակաւորութիւնները։

— Ախարիսի մէջ գինովի մը ատրճանակ մը պարպել ու փախչելուն վրայ հայ ոստիկան մը եւ ստրաժնիկներ ահագին աղմուկ հանած եւ վեց մարդ վիրաւորած են։ սարսփաւար ժողովուրդը անգործացնելու համար գաւառապետ ամեն միջոց ձեռք տուեր է։ Ոստիկանները առարկներ են թէ հայերը խրոլվին իրենց վրայ զէնք արձակած են։

— Իգտերի նահանգապետ Եսգկեւիչի հաւաքած է հայ եւ թուրք զինուորականները։ Ներկայացուցիչները եւ յորդորած հանգիստ կենալ եւ անցածը մոռացութեան տալ, եւ աւելցուցած է «իսկ եթէ կրկին պատահի, զորքը անխնայ կը կոտորէ մեղաւոր կողմը։ Եւ այն գիւղերը՝ որոնք ենթարկուած են էկզէկուցիայի եւ տուգանքի, էկզէկուցիան կը ներսն իսկ տուգանքը պէտք է հաւաքել եւ յանձնել սպանուածներու եւ վիրաւորներու ընտանիքներուն»։ Հայերէն 2425 ռպ. իսկ թուրքերէն 1650 ռպ. կուգուի։

— Սուրմալու գաւառի թուրքերը այլեւս ձանձրանալով իրենց պէկերու գործիք լինելէ եւ զգալով սպառնացող վտանգը, դիմած են գաւառապետին եւ աղաչած ի սէր Աստուծոյ սուղատել զիրենք այս անտանելի դրութենէն եւ ճար գտնել կառնաւորելու առջի զբաղմունքները եւնու Գաւառապետը անմիջապէս կարգադրութիւններու սկսած եւ ջուրի առուները զօրքի հսկողութեան տակ առած է։ Հետեւաբար հայ եւ թուրք սկսած են իրենց կանոնաւոր դաշտային աշխատութեան։ Զօրքը զիւղերը կը պտըտի թնդանթներով հսկելու։

— Շուշիի գաւառին մէջ թուրքերը մասնակի ոճիրներ զէն կը գործեն, երկու նոր սպանութիւն եւ մէկ առեւանգում կատարած են։

— Շուշիի գորավար Գոյշապուրը կը հեռագրէ փոխարքայի գիւնատան թէ

բոլորը սուտ կը խօսին, ուստի պէտք չէ հաւատալ լրագրիւններու գրածներուն եւ ժողովուրդի դանդաղներուն։ մինչեւ որ ոստիկանութիւնը չստուգէ, ոեւէ տեղ զօրք չպիտի դրկեմ։

— Պաթում — Բաղաքական բանտարկեալներ զինուորներով բանտ տարուած ատեն՝ ճամբան յանկարծ փախան։ Առանց հրացան պարպելու միայն մէկը բռնուեցաւ։

Յունիս 18ին այգիին մէջ թուրքերը սպաննեցին Ղուկաս Մանուկեանը Զօլգարի մօտ մանկատանները սպաննելով Ռարութիւն եւ Յովհաննէս Մխիթարեանները, զուգահեռ կտրեցին ու հետ տարին։ Ազդի Բէրիմ օղլուն ձերբակալուած է։ Գիւղերը սպաննուեցաւ քրիստոս Մուրադսկին։ Մօլլա Հասանը թուրք զինուոր էկզէկուցիայի կենթարկուի։ Բօրչալուցիներէ 600 ռպ. հաւաքել հրամայուած է սպաննուած Մխիթարեաններու ծնողքին տալու համար։

— Պաղուէ յունիս 19ին հեռագրած են։ «Այսօր նահանգական բանտին մէջ մահմետական բանտարկեալները զանակներով կոռուեցան ուսանելու հետ։ Ժանդարպէս վիրաւորուած են 20 հոգի, իսկ թեթիւ կերպով 25 հոգի։ Զօրքը գալով կարգը վերահաստատեց»։

Ո Ձ Դ

Ազգ. երկսեռ Վարժարանաց մրցանակաբաշխութեան հանդէսը տեղի պիտի ունենայ այս կիրակէ, 2 յուլիս, Ս եկեղեցւոյ մէջ. յետ աւարտման Ս. Պատարագի։

Հոգաբարձութիւնս լիայոյս է որ արգոյ հայ հասարակութիւնը պիտի փութայ խմբովին ներկայ գտնուիլ սոյն հանդէսին առ ի քաջախիռութիւն երկսեռ ուսանողաց։

Մնամ յարգանք

Ի դիմաց ազգ. վարժարանաց Հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ յՄ. Սիմանեան Փ. Հայաճեան

հեղեղի պէս թափէր իր խոր խորեկած մօրուքին մէջ։ Ընթերցողն մէջ առաւ աղջկան գողջուն ձեռքերը, կուրծքին տարաւ զանոնք, չուրթունքներուն մօտեցուց, համուրեց ու յետոյ իր պատկառելի գլուխը կախեց՝ ներքին ու հոգեկան անդիմադրելի վշտի մը մէջ ընկճուած։

— Հայր, հայր... բացադանջեց Վարսենիկ. ո՛հ մի՛ արտասուեմ... երջանիկ, երջանիկ եղիւ որ աշխարհքն իմս ըլլայ։ Զեմ ուզեր որ իմ պատճառովս վշտանաս։ Թո՛ղ զրպարտեն... Աստուած կայ։

— Բայց... զրպարտողը օտար մը չէ՛, նկատել տուաւ Կարիպ Ախպէր։ — Բենէ գատ՝ մայրս միայն կը ճանճնամ։

— Արէ՛կ կըսես... չէ՛ որ այս խեղճ կինն իմ պատճառովս պիտի տառապի ու իր ամուսնոյն հետ պիտի չկրնայ երջանիկ ապրիլ։

Մանկամարդ աղջիկը հակադէմ ու անողորմ դրութեան մը մէջ ինկաւ։ չէր ուզեր սիրելի մօր տառապանքը, միեւնոյն ատեն՝ անկտրելի էր իրեն որ բաժնուիլ մարդէ մը, որ իր կեանքն, իր արեւն ու իր աշխարհքն եղած էր։ Հերեւաբար, այս իրարու ներհակ միջոցներուն մէջ, երկար ա-

ՌՈՒՍԻՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

(Շար. Նախորդէն եւ վերջ)

Այս բոլորը, իհարկէ, շատ լաւ տեսնում է եւ բերօղրատիւն, եւ հէնց այդ պատճառով էլ, երբ նա բարկացած ըստէին Դուստն ցրվելու որոշումն է տալիս, մի քանի բռնիք յետոյ նրա ձեռքերը թուլանում են, երբ սկսում է լրջութեամբ դրա հետեւանքների մասին մտածել։ Եւ իսկապէս, Դուստն ցրվելուց յետոյ, կառավարութիւնը, ուղէ չուղէ, պէտք է զինուորական զինատուրա նշանակէ։ Բայց ներկայ հանգամանքներում ու ներկայ պայմաններում, երբ կառավարութեան ղեմ են ոչ թէ մի քանի խմբակներ կամ նոյնիսկ յեղափոխական կուսակցութիւնները, այլ ամբողջ ժողովուրդը, նրա բոլոր խաւերը նոյնիսկ զօրքի մի մասը, ի՞նչ կարող է անել զինատուրան։

Զինուորական զինատուրա նշանակել, այդ կը նշանակէ՝ կառավարութեան պարզապէս փողոց դուրս գալ իր բանակով թշնամուն ղեմ կուսելու բայց ինչպէս դուրս գալ, երբ կառավարութիւնը այլեւս համարեայ թէ բանակ չունի։ Այս բանն էլ, ի հարկէ, շատ լաւ է հասկանում բերօղրատիւն, նա էլ, երեւի, գիտէ, որ զինատուրան ամեն տեղ եւ ամեն մահմանակ միեւնոյն արդիւնքը չէ կարող ունենալ եւ անաղորտեան մատնուած զինատուրան ամենամեծ եւ կորստաբեր պարտութիւնն է կառավարութեան համար։

Եւ այս բոլոր, իր համար տխուր, հետեւանքների մասին լաւ մտածելուց յետոյ է, որ կառավարութիւնը շտապում է հիքքել Դուստն ցրվելու զինատուրութեան մասին տարածված լուրը։

Այստեղ ահա սկսվում է խնդրի միւս կողմը, «այս ի՞նչ անել, ի՞նչ պէս դուրս գալ այս կախարչական աշխարհից»՝ մտածում է բերօղրատիւն եւ իր յուսահատ քայլին, որոշում է, որ մինիստրութիւնը պէտք

է հրաժարական տալ։ Սակայն այլ բան է գրոշելը եւ այլ բան է որոշածը կաշարելը։

Շատ հեշտ է ասել՝ մինիստրութիւնը պէտք է հրաժարական տալ։ Բայց չէ որ պարզապէս նշանակում է, որ ամբողջ բերօղրատիւն ինքնաթափ կերպով իր պարանոցը դէմ պիտի անի մահադոծի դանակին։ Այլ կերպ չէ էլ կարող լինել ներկայ պետ. Դուստնի կաշմի օրով։ Նոր մինիստրութիւնը պէտք է անպատճառ կաշմուի այն պիսի անձնաւորութիւններից, որոնք Դուստնում մեծամասնութիւն կունենան, իսկ բերօղրատիւն ներկայումս Դուստնում մեծամասնութիւն չունի եւ չէ էլ կարող ունենալ։

Եղած մեծամասնութիւնը հէնց առաջին օրից պատերազմ յայտարարեց բերօղրատիւնին, ցանկութիւն յայտնելով ամբողջ աղմկոտ աշխարհային, ամենաբարձր մինչեւ ամենացածր, բոլորովին զրկել իրանց պաշտօններից եւ դատաստանական պատասխանատուութեան ենթարկել նրանց երկրին հացրած բոլոր շարքների համար։

Էհ, իրերի այսպիսի կացութեան մէջ, ի՞նչպէս տեղի տալ, ի՞նչպէս հրաժարվել։ Եթէ բերօղրատիւն Պետ. Դուստնում մեծամասնութիւն ունենար այն մասնակ խնդիրը շատ կը հեշտանար. ներկայ մինիստրութիւնը կը հրաժարվէր, նրան փոխարինէին նոյն բանակին պատկանող այլ մարդիկ, որոնք Դուստնի հետ համերաշխութեան գալով, գործերը առաջ կը տանէին։ Բայց այդպիսի բան չկայ։ Բերօղրատիւն կողմակցեց նրա չունի։ Եւ հէնց այդ է պատճառը, որ նա, ամեն անգամ, մինիստրական հրաժարականը որոշելուց յետոյ, յանկարծ սոսկում, սարսփում է եւ այդ սարսփի կատաղութիւնից հակառակ որոշումն է, տալիս, պէտք է ցրվել Դուստն։ Իսկ այս որոշումն էլ՝ ինչպէս վերելու տեսանք։ Նրա առաջ մի ուրիշ անգունդ է բացում։

Եւ այդպէս մնում է բերօղրատիւն երկու կրակի մէջ խորովելով ու իր հետ խորովում է եւ ամբողջ երկիրը։ Հազիւ թէ բերօղրատիւն իր ինիցիատիւով կարողանայ իր այդ անվերջ տատանումներից դուրս գալ. նա այդ-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԿԱՐԻՊ ԱԽՊԵՐ...

— (Շար. Նախորդ թիւէն)

— Բան մը չը կայ, հայր, դուն սիրտդ մի՛ ճմլեր... պատասխանեց Վարսենիկ անոր գիրկն ինկալով։ Մօրս հետ ողբալի հօրս դատապարտութեան կախաղանին վրայ կը խօսէինք... սրտերնիս ելաւ... սկսանք արտասուել...։

— Վարսենիկ... բարի աղջիկս, մի՛ ծածկեր... ես բոլորը, բոլորը լսեցի... ա՛խ, կը պահանջեն որ բաժնուիս ինէ, անանկ չէ՛։

— Աստուած չ'ընէ՛, հայր, իմ... քենէ բաժնուիլ... ո՛հ, ինչ կըսես... մեղու՛ր, մեղու՛ր ուրեմն զիս...։ Գերեզմանը միայն կրնայ անջատել մեզ...։

Կարիպ Ախպէր զգաց որ փրտը փխրած էր ու պէտք էր պարպել զայն... ուստի թողուց որ արցունքը

տեն տարուբերուեցաւ ու գերագոյն ճիգով մը ըսաւ։

— Հեռանա՛նք ասկից, հայր, իմ։ — Մօրմէ՛դ... գոչեց Կարիպ Ախպէր։

Մանկամարդ աղջիկը չը համարձակեցաւ անգամ չընել իր յայտարարութիւնը կրկնելու։ Նայվածքը մօր ետեւը դարձուց ու արտասուելով անոր գիրկն ինկաւ։

— Ո՛հ, մայր, իմ, մայր, իմ... ներէ՛, ներէ՛ ինձի... հեծկտաց Վարսենիկ։

— Մի՛ լար, Վարսենիկս, մի՛ լար... թոթովեց կինն ու իր կուրծքն վրայ սեղմեց աղջկան գեղեցիկ գլուխը՝ մայրական անհուն գորովով մը։ Գնա՛... թո՛ղ զիս...։ Զէ՛, չէ՛... մի՛ բաժնուիլ արդատարաբէ՛կ... անոր գորովանքներուն, անոր սիրոյն, անոր շուքին տակ մեծցի՛ր... ան քու երջանկութիւնդ է, ան քու բովանդակ կեանքդ է։ Որդեգիր մը չ'ես, այլ հարազատ աղջկան մը պէս, որ պաշտուելիս։ Գնա՛, կըսեմ, որ ուրվականներու աչքը չ'իջնայ վրադ։ Պատուո՛յդ ու հօրդ անուան սիրս՛յն հեռացի՛ր աս գեղէն։

Կարիպ Ախպէր խռովուած էր... անոր կողորդը կը ճգմուէր ու հոգին կը

խղոցէր։ Մեքենաբար ոտքի ելաւ ու տրգմայի ձայնով մը ըսաւ։

— Խաթուն քուրի՛կս, կը յիշե՛ս արդեօք ա՛յն օրը ուր դուն ձեռքովդ կը յանձնէիր Վարսենիկի հօրը թուրթիւրը մարդու մը, որ Ասլանի ընկերն ու եղբայրն եղած էր...։

— Կը յիշե՛մ, ո՛հ, կը յիշե՛մ... բացադանջեց կինը մօրմօքուած շեշտով մը։

— Անոր գէ՛մքը...։

— Անոր գէ՛մքը չեմ յիշեր... անկից իվեր վեց տարիներ անցած են։

— Անու՛նը...

— Անու՛նը Կարիպ Ախպէր էր։

— Ի՞նչ խոստացաւ քեզի։


— Աղջիկս գտնե՛լ...

— Ահա՛ ես այն մարդն եմ... խոստումիս համա

պէս էլ կը մնայ երկու. կրակի մէջ, մինչեւ որ յեղափոխութեան ուժգին յորձանքը չը գայ ու նրան դուրս չը նետէ իր այդ անկանիւրի գրութիւնից:

(Մշակ) Խ. — Ազատ

ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԲՈՂՈՒՐԸ



Ս. Էջմիածնայ Միաբանութեան վեց արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ և ութը վարդապետներ ընդարձակ խնդրագիր մը մատուցանելով վեհ. կաթողիկոսին, բողոքած են Յուսիս 7 ի կոնգակին առթիւ: Բողոքարկու Ս. հայրերը ընդունելով հանդերձ աշխարհական երեսփոխաններու մասնակցութիւնը եկեղեցական պաշտօնեաներ ընտրելու և հոգևոր գործերու միջամտելու իրաւունք տրուելը, հետեւեալ դիտողութիւնները կ'ընեն.

Մի կողմ ենք թողնում Հրահանգի այնպիսի անհարթութիւնները, ինչպէս, օրինակ, որ Աղէքսանդրապոլի վիճակից 7 պատգամաւոր է պահանջուում, իսկ Բեաւարաբիթ թեմից միայն մէկ, իրեւ թէ Աղէքսանդրապոլի վիճակում 7 անգամ աւելի հայ բնակիչներ կան, քան ամբողջ Բեաւարաբիթ թեմում եւ կամ Շիրակի գերդաջիւններ աւելի իրաւունք ունեն եւ աւելի ձեռնհասութիւն Հայոց եկեղեցւոյ վիճակը տնօրինելու, քան մյուս քաղաքների բնակիչներն ու իւրիսի երախտաւոր գաղթավայրերի ներկայ սերունդը. թողնում ենք նաեւ ընտրութեան եղանակի այնպիսի ձեւակերպութիւնը, որով այդ կենտրոնական համագործակցի եւ Ռուսահայոց բողոք եկեղեցական գործերի կարգադրիչ եւ տնօրէն համարուած ժողովը կարող է կողմուած լինել ընտրեալներից, որոնք ունեն ռուսաբանակ հայ ժողովրդեան ձայների մի հարիւրերորդ մտ.

սը միայն. այլ տմենից աւելի նրա վրա ենք զարմացել եւ տարակոյսների մէջ ընկել. թէ այդ տեսակ ամենաանդարձակ իրաւունքներ եկեղեցական գործեր կարգադրելու ինչպէս են տրվում մի ժողովի որի մէջ Հրահանգի համաձայն կարող է պատահել, որ ոչ մի եկեղեցական անձն չը լինի: Այսպէս պէտք է ուրեմն վերահաս տատուին մեր կանոնական աւանդութիւնները:

Բողոքարկուները պատմական օրինակներով կը յիշեն թէ սկիզբէն մեր եկեղեցական ծանր խնդիրներու առեւն հայ իշխաններ և երեւելիներ կրօնականներու հետ միաբան գործեցին. նոյն իսկ մինչեւ վերջին ժամանակները առանց աշխարհական ներկայացուցիչներու մասնակցութեան ոչ մէկ կարեւոր եկեղեցական գործ չէ ձեռնարկուած. Սակայն, կըսեն.

Սակայն մի ժողով կազմուած բացառապէս աշխարհական անձերից, որ ելնեն ամեն տեսակ եկեղեցական գործեր քննեն, վճիռներ տան եւ նոցա վճիռները բացարձակ ու անպառնալի լինեն այնպէս որ ամբողջ եկեղեցական անձինք ու հաստատութիւնները աւանայն Հայոց Հայրապետից սկսած մինչեւ վերջին ժամկոչը, պարտաւորուեն նրանց անպայման հնազանդել, բողոքովին նոր բան է եւ չափազանց դարձանալի բան, որ ոչ մեր ազգի եւ եկեղեցւոյ մէջ է հղել երբ եւ իցէ, ո'չ էլ աշխարհիս երեսիս որ եւ է ուրիշ տեղ՝ սկսած Բրիտանիայի եկեղեցւոյ հաստատութեան օրից, եւ մի թէ հնարաւոր է, որ այդպիսի բան լինի: Մի թէ մի ժողով մտքից կանգնի այդպիսի բան աշխարհական հաստատութիւնների չըլձնում գլուխ դնելու: Եւ ինչո՞ւ այս տեսակ փորձութիւնները հայոց բազմադարեան, բազմաշարք եկեղեցւոյ գլուխը պէտք է գան. ո՞ւմ օգուտն է արդեօք այդ պահանջում եւ ինչ ստիպողական պահանջներ կան դորա համար. ինչո՞ւ եկեղեցական գործերի անհմուտ աշխարհական ան-

ձինք միայն պէտք է եկեղեցւոյ վիճակը տնօրինեն, իսկ ամբողջ հոգեւորական դասակարգը դուրս քշուի եւ մինչեւ անգամ իրաւունք չունենայ իւր կարծիքը յայտնելու այնպիսի գործերի մասին, որոնք իւր ձեռքով պէտք է կատարուեն եւ որոնց համար նա պէտք է պատասխանատու մնայ Աստուծոյ, ժողովրդի եւ պետութեան առաջ:

Այդպէս եւ, քանի որ պետական օրէնքը Հայրապետին է ճանաչուած գլուխ եւ բացարձակ տնօրէն Հայոց եկեղեցւոյ բոլոր հոգեւոր գործերի համար, իսկ Ս. Էջմիածնի սինօդից իւր սրբազնագոյն նախագահի հետ իրեւ Ռուսաստանի սահմաններում եկեղեցւոյ բոլոր տնտեսական եւ վարչական գործերը կարգադրող բարձրագոյն ատեան, ինչպէս կարող է ուրեմն յանկարծ մի ուրիշ ժողով հանդէս գալ, որ թէ Հայրապետից եւ թէ Սինօդից բարձր կանգնած լինի եւ Հայրապետը ներկայանայ իրեւ պաշտօնական միջնորդ միայն կայսեր եւ կենդրոնական ժողովի մէջ, իսկ Սինօդը լինի նոյն ժողովի ստորագիր, հրամանատար եւ գործադիր հաստատութիւն միայն:

Վերջապէս ընդունենք թէ այս բողոք անարկութիւններն անդոր են յիշուած եւ կենտրոնական ժողովը յիշեալ բացարձակ իրաւասութիւններով ու սոցա գործադրութեան հետեւանքներով մէկտեղ գլուխ է գալիս. այդ զէպքում հայ հոգեւորականութեան ամբողջ դասը իրաւագրկութեան ու ստրկական խոնարհութեամբ ո՞ր աստիճանին պէտք է հասնի, եւ այնուհետեւ ո՞ր անպէտք ու անպատիւ հայը կ'օծարի աշխարհը թողնել եւ անդամ գրուել մի այնպիսի արհամարհուած դասակարգի: Այլ եւս Բրիտանիայի ծառայելու ինչ հնարաւորութիւն այնպիսի վիճակի մէջ, որտեղ աէր ու հրամայող մարդիկ են միայն եւ կեանքի ու պաշտօնավորութեան բոլոր պայմանները կախուած են աշխարհական մարդոց հաճոյքից, մինչ եկեղեցւոյ բարձրագոյն պաշտօնեան անգամ հլու հպատակ պէտք է լինի այնպիսիների տնօրէնութեան, որոնց մէջ կարելի է ո'չ եկեղեցական հոգի կայ, ո'չ գիտութիւն: Թվում է

թէ նոյն իսկ եկեղեցւոյ այժմեան ուխտեալ պաշտօնեաների համար աւելի լաւ է ամեն բանից հրաժարվել եւ ճակատի քրտինքով կերած հացը վաստակելու մի ուրիշ ճանապարհ գտնել քան թէ այնպիսի ստորագրիչ պայմանների մէջ մնալ եւ հակառակ կոչման, հակառակ պատուի զգացման ու հակառակ խղճմտանքի գործել:

Բողոքարկուները եզրակացնելով, կը խնդրեն «այսպիսի մի սասանեալ ժամանակ, երբ դրսից արհաւիրք և ներսից զանազան խռովութիւններ են պաշարել մեզ, տեղիք չտալ կնճուռ խնդիրներ յազելու և հայրենի ցանկը խրամատելու, մի՞ գուցէ Տիրոջ այգին անցաւորների ոտի տակ ընկնի և օտարները քաղեն նորա պտուղը: Ու՛ր կը յաւելուն, եթէ եկեղեցական վարչական և այլ գործերու մէջ բարեփոխութեանց պէտք կան, կարելի էր եկեղեցական և աշխարհական գիտակ անձերէ յանձնախումբեր կազմել ուսումնասիրելու և նախագծեր պատրաստել տալ և յետոյ աւելի խաղաղ օրերու ընդհանուր ազգային եկեղեցական ժողով գումարել, աշխարհի զանազան կողմերը ապրող բոլոր հայերու մասնակցութեամբ:

Բողոքագիրը կառավարիչ որ օգոստոս 15 ին գումարուելիք կեդր. ժողովին Մայր Աթոռի միաբանութեան մէկ քանիններ մասնակցին և նոր կոնգակով մը պատուիրել պատուիրակներուն որ որոշ թուով եկեղեցականներ ընտրեն. և այդ կեդր. ժողովը քննէ միայն ծխական դպրոցներու համար պատրաստուած նախագիծը, խորհրդակցի Մ. Աթոռի ճեմարանի և թեմական դպրոցներու վիճակի ու ծրագրի մասին և ընէ միայն այնպիսի

— Ասլան ազատուած է. . բա՛յց...
— Ազատուած է... ճիշդ կ'ընէ խենթի մը պէս:

— Այո՛... բայց չը կրնար սիրտ ընել քովէ գալու... չարուենակեց կարիպ Ախպէր՝ որուն հոգին կուռէր:

— Պատճառը:

— Պարզ է այդ. դուն ամուսնացած ես ու զաւակներ ունիս. ինչպէ՞ս գայ խռովէ ընտանեկան յարկիդ երջանկութիւնն ու թոյն խառնէ ձեր կենսակցութեանը մէջ: Ասիկա ո'չ մարդը կընդունի եւ ո'չ Աստուած: Դո՛ւն քու ճակատագրիդ հետ... իսկ ան՝ իր ճակատագրին: Այս է ամենէն ճշմարիտ անձնութիւնը: Կը յիշե՞ս, ըսիր ինձի թէ՛ «չեմ ուզեր որ Ասլանս կենդանի մեռածի մը յիշատակովն ապրի»: Ու այդ պատճառով՝ անոր զրկած նուէրն անգամ չընդունեցիր: առաքիչելով որ. «արեան կաթիլներ ու նուիրական արցունքներ թափուած են ատոր վրայ»:

Նազենիկ խաթուն այդ բոլորը յիշեց... Կարիպ Ախպէր ճշմարտութիւնը կըսէր. Բայց իր կանացի քաղցը, գիտութիւնը սիրակէզ սրտին մէջ կարօտի մ'անգուսպ հոսանքը թափանցած էր... հետեւաբար պաղատա-

զին ու արտասուալից ձայնով մը մրմնջեց.

— Ո՛հ, Կարիպ Ախպէ՛ր, դիտե՛ր որ կը մեռնիմ. կարօտէս կը խղճուիմ ու չեմ կրնար հանդուրժել... Անգամ մը, ախ, գոնէ անգամ մը թո՛ղ դայ հոս, տեսնեմ զինքը, խօսիմ իրեն հետ, անոր աչքերուն մէջ նայիմ, անոր տառապեալ հոգին սփոփեմ ու յետոյ ճամբու գնեմ զինքը... Ո՛հ, ո՛հ... տարիներով ու պստեցի իրեն... երագեցի՛... լացի՛ անոր համար... ու աղօթեցի՛: Թող գա՛յ... անոր առջին ծունր պիտի գնեմ ես ու ներում պիտի խնդրեմ որ երդունմիս համաձայն չը վարուեցայ: Պարտական եմ... պարտական եմ անոր:

Կարիպ Ախպէր, այդ գերագանց, վեհ ու քա՛րճը հոգին, որ համբերութեան ու անձնութեան մարմնացումն եղած էր տառնելի վիշտարիներէ ի վեր, այդ պահուն զգաց որ կ'ընկ ճուէ՛ր, կը տկարանա՛ր, կը կթոռէ՛ր, ինչպէս սրտին վէրքէն չարչարուող զոհ մը... Անոր կերպարանքին վրայ պատկերուած ճառագայթը ստուեր մը պատեց ու ճակտին վաղահաս խորշովները սկսան գալարուիլ: Ու դողդղալով Նազենիկ խաթունին ձեռքը բռնեց ու պաղատեց.

— Իրդում ըրէ՛ որ Ասլանին հոս գալը, քու հետ տեսնուիլը, մանաւանդ այս երկրին մէջ ըլլալը պիտի չը յայտնես ո'չ մէկուն... նոյն իսկ հիւժակուան ամուսնոյդ: Ան ատեն կը վստահիմ ու Ասլանը գիշեր մը տունս կրնամ բերել... Դիտեալու ես որ աքսորավայրէն խոյս տուած է ու անոր կեանքը միշտ վտանգի տակ է: Եթէ տարակոյս մը հասնի կառավարութեան ականջը, անմիջապէս կը ձերբակալուի ու այս անգամ ձեր աչքին դիմաց կախաղանի կը քործարանայ... Եստ է անոր ազատուելը... բայց կը փնտռուի... որովհետեւ անոր թեւին վրայ թիարանի յատկանիշը կայ՝ սեւ՝ ու անջնջելի՛ տառերով դրոշմուած:

— Կ'երգնու՞մ, կ'երգնու՞մ, Կարիպ Ախպէ՛ր, դողդղաց տարաբաղդ կ'ընէ: Կ'երգնու՞մ խղճիս, պատուոյս ու Աստուծոյ վրայ: Թո՛ղ դայ... խօսի՛ ինձի հետ... ներէ՛ ապերախութեանը ու աչքիս առջեւ իրեն յանձնուի իր մէկ հատիկ հարազատ աղջիկն ու՛ անկից ետք՝ թո՛ղ մեկնի...:

Ան ատեն Կարիպ Ախպէր բացաւ թեւը, ցոյց տուաւ աքսորավայրին յատկանիշն ու ըսաւ.

Ճանցա՛ր, ճանցար թէ ո՞վ եմ ես խեղճ Նազենի՛կս:

— Ինչ կը տեսնեմ, Աստուած իմ, դու՛ն... Ասլա՛ն... խղճուեցաւ կիներն ու ինկաւ Կարիպ Ախպոր ոտքերուն ներքեւ:

— Ելի՛ր... ասիկա ճակատագիրս էր... թոթովեց թշուառ մարդն որ զրկաց մէջ առաւ իր աղջիկն ալ խելահեղ վիճակով մը:

Այսպէս, այդ երեք տարաբաղդները ժամերով լացեն ու չը կրցան բաժնուիլ իրարու զրկէն:

Օ՛հ, քսամներ իմ եղբրական տեսարան... Հո՛ն, երկա՛ր ու ձի՛գ տարիներ անցնելէ ետքը, ճակատագրական այս տառ-պատմութեան ամենէն յուզիչ երեւոյթը կը պատկերանար՝ արցունքի ու զառնութեանը մէջ...:

(Շարունակելի)

կարգադրութիւններ տրոնք մի մասնաւոր և յանձնարարականորէն ժողովի իրաւասութեան սահմաններից չեն ելնում:

Ինչպէս հաղորդած էինք մեր նախորդ թուով, վեհ. կաթողիկոսը վաճառած է պարզապէս բողոքարկու Ս. հայրերը իր առջեւէն և անոնց ցոյց տուած է վանքին գուռը: Բայց փափաքելի է որ միջադէպը խաղաղօրէն գոյուի և Վերջ ապրիլի պըտուղը օտարը չը քաղէ:

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տեղւոյս Աղգ. վարժարանի աւագնի ինչպէս պիտի կատարուի վաղը առաւօտ եկեղեցւոյն մէջ, ժամերգութեան անմիջապէս յետոյ. կը յուսամք թէ, ի յարգանս սրբավայրին, այս տարի չպիտի կրկնուին անցեալ տարուան տեղի անտեղի ծափահարութիւնները որոնք Ս. տաճարին թատերասրահի մը երևոյթը կուտան:

— Տ. ձիւթեմանի տնօրինութեան տակ գտնուող « Աղջկանց Կրթարան » ի ամսվերջի հրապարակային հարցաքննութիւնները պիտի սկսին վաղը և պիտի վերջանան յուլիս 9 ին:

— Տօպրիշի հայ ընթերցարանին վարչութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ այն անձնորոն, որոնք մասնակցած են տօնավաճառի առթիւ ընթերցարանին ի նպաստ կատարուած հանգանակութեան, որուն գումարը եղած է 38 ֆր. և որուն 10-ֆրը Աղջկանց եղբարք տուած են:

ՀԱՎԱՏՈՒՄ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Անատուրուտա էրմէնի էհալիսի հերնէվ թէգեիգաթա տիւշար օլընտըգտան մատա, չիմտի Թիւրքլէր քիլիսէ վէ մանասթըր միւլքլէրինի տախի զասպ իթմէյէ պաշլամըշլար տըր: Եիւլէրճէ սէնէլէրտէն պէրու միլլէթին միւլքիւ վէ Սիւ մանասթըրին ալիտ օլան թըլան չիֆլիկի հիւքիւմէթ զապթիէ՝ մուհաճիւրլէրէ վէրաիկինի պուռտան էվլէլ եալմըշ ըտըգ. պու տէֆա տախի Բալու գազասընտաքի մէջհուր Ս. Աստուածափին վանքը վէ տիկէր պիր մանասթըր քիւրտ պէյլէրինտէն զապթ օլընմուշ. մահէլին հիւքիւմէթի պու զասպը մէնն իտէճէք եէրտէ խօշուտիյէթ կէսութէրմէքտէ իմիշ. հալպուքի

հէր պիր միւրաճաթտան աճիգ գալմըշ օլան Բաթրիքիւսնէ պու խապերլէրի վէ րաբօրթլարր ալտըգտան սօնրա «պուրայա իշ պրադմայըն, եէրինիգտէ թէսվիլէ իտին» էմրի վէրմէյէ քէնտիսինի մէհպուր կէօրիւյօր: Բաթրիք Օրմանեանըն իսթիֆա վէրմէսի տէ պու վէ պու կիպի սէպէպլէրտէն նաշի տիր:

— Սէլտինք վիլայէթինտէ Արնաւուտ վէ Բոււլա տան միւրէքէպ պիր չէթա կէօրիւմիւշ տիր:

— Մաքթիսիտա րոււմ մէթրօքօլիտլէրին չէթալար թէշքիլ իթտիւրմէքտէ օլտըգլարը սէպէպլէ, անլէրտէն իւշիւնիւն աղիինի Հիւմի բաշա թալէպ իթմիշ վէ Սթանպուլ կէթիւրմիւշ իտի: Բոււլ Բաթրիքհանէսի մէրգոււմ մէթրօքօլիտլէրին թէքրար մահէլի մէմուրիլէրինէ կիթմէլէրինի իտտաա իտէյօր: Պապը Ալի իսէ օլամազ տէյօր: Սինթթարաֆընտան թէհտիտաթըր միւրաճաթլար օլմասը իւզէրիւնէ, [եանի քիլիսէլէրի գաբարըշ բաթրիք իսթիֆա իտէր կիպի] երլտըզըն սէր քեաթիպի Թահպին բաշա իքի տէֆա բաթրիքհանէյէ կիտէրէք: Սուլթան մէրգոււմ մէթրօքօլիտլէրին մահէլը մէմուրիլէրինէ կիթմէլէրինէ միւսաաաթէ իտէճէլիինի ֆազաթ միւսթաճէլ իշլէր սէպէպի իլէ պիր աղ կէճ գալաճաղընը պէյան էյլէմիշ տիր:

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Կէչէն ագչամ Սօֆիատա վէլ. Բօշքա կազէթաւընըն սահիպ-մուհարրիլի Ս. Շաֆկուլըն խանէսինէ մէճհուլ աաալար հիւճիւմ իտուպ. իւթ գաթըն ճալարընը գըրտըգլարը մէքքիւր կազէթա եաղրօր:

— Սօֆիա չէհրին եէնի մահէլլէսինտէ պուլուրան Չինկեանէ խանէլէրինի գալտըրմագ իշլին պէլէտիյէ գաբար վէրմիշ իտի իտէտէ, Չինկեանէլէրին պիր գաշ եիւզ քիշի տախիլիյէ նէգաթէթի էյնիւնէ պիրիքուպ նիւմայիշ իթմէլէրի իւզէրինէ, Չինկեանէլէր իշլին պաշգա պիր եէր թային օլընմաա տէկին էվլէրին երգըլմաշաճաղը նէգաթէթտէն պէյան օլընմըշ տըր:

Քէզա Վառնատա Չինկեանէլէրին էվլէրի թէքրար տահա խաղա կէօթիւրմէք իշլին պիր թասալվուր վար տիր:

— Տիւն իլիմանըրգա վարիտ օլան վարօրտա Մըսըրտան կէլէն միլլէթտաշլարըմըզ էլլէրինտէ բասաթօրթլարը օլտըզը հալտէ իշլէրիյէ գապուլ օլընմաալար: Պուրաճա օլան միւրաճաթլարաշու եօլտա ճէվապ վէրիլմիշ տիր «Պուլկարիայա էճնէպի գապուլ իթմէք իսթէմէյօրըզ» Պու գաբարըն հիւքիւմէթի պուլկար հիւքիւմէթինէ ալիտ տիր:

Բ Ո Ւ Ս Ի Ա

Բուս-ճաթօն մուհարէպէսինտէ ամիրալ Բօթաթէսթվէնսքիինի մալէթինտէ պուլընան վէ վապօրլարը իլէ պէրապէր ճաթօնլարա թէսլիմ օլան պիր թագըմ պահրիյէ զապիթլէրին մուհաքէմէլէրի Գրօնշթատ պահրիէ մահքէմէսինտէ իճրա օլընուպ, անլէրտէն պիր գաշը իտաւա մահքիւմ օլտու: Ամիրալ Բօթաթէսթիւնսքի պէրաաթ իթմիշ վէ գահրաւան իւնվանըն մազհար օլմուշ տըր:

— Թամպուտա պիր սիւվարի ալայի ըսեան իթմիշ, պիր զապիթ էօլտիւրմիւշ, Պիր տրադօն ալայի իսթէլալըրարըն իւզէրինէ կէօնտէրիլմիշ իտէտէ, օնլար գըշլարը գալիլէշտիրուպ ըսեան պալարը չէթմիշ տիրլէր:

— Կալկասիատաքի իսթիւքեամասքէրլէրինի պիրինճիալայընտան 27 քիշինին մահքիւմ իտիլիկինտէն տօլայի 780 քիշի ըսեանա գալգչիւր օլտըզը Բէթրսպուրիտան Պէրլէնէ պիւտիլիմիշ տիր:

Բօրթ Արթուրտան մատա, Մանշուրիանըն հէր թարաֆր թիճարէթ իշլին սալիւր տէվլէթլէրէ աշըգ օլաճաղը մարքիլ իթօ պէյան իթմիշ տիր:

— Պիր չօգ թարաֆլարտան վէրիլէն մալիւմաթ իւզրէ, քէօյլիլէրին իսթիւլը կիթտիքճէ եօլըլմագտա տըր: ասքէր քէօյլիլէրէ գարշը կիթմէք իսթէմէյօր:

Նօփօյէրքաթտան պիր թէլէկիւրաֆա պինաէն, գազանըն խազախարր սիւհա ալթընա կիրմէք իսթէմէյօրլար:

— Էքաթէրինսուվ սանճաղընտա խազախար պէյնինտէ պէօյիկ գարըշըգլըզար վուգուպուլմուշ տըր: Խազախար պիր գաշ աէֆա իշլիլէր իլէ պիրլէշմիշլէր: Իշլիլէր անլէրի գուրթարմագ իշլին 3000 քիշի գազալմալը գուշաթմըշլար:

— Մօսկուա. — Էրասուվ չըմէնտըֆէրինտէ իքի եօլճը թըրէնին գասիէրինէ պիլ հիւճում, գօնտիքթօգը էօլտիւրիւպ, 27000 րուպլի գալտըրմըշլար վէ գաշմըշլար:

Վարշաւա թըրէնինտէ տախի այնը պիր խըրըզլըգ վագը օլմուշ:

Մ Ի Ի Թ Ե Ն Ե Վ Վ Ի Է


Գօրէն Բաթիթաթր օլան Սէուլ չէհրինտէ իմէրաթօրին սէրալընտան Գօրէալը մուհաթըշլարը գօլարագ, ճաթօնլար քէնտիասքէրլէրի իլէ սէրայի իհաթէ իթմիշլէր: վէ քէնտէլէրինտէն միւսաաաթէ օլմատըգճա քիմսէ իմէրաթօրլէ կէօրիւշէմէյէճէ կինի իլան իթմիշլէր: Շու հալտէ Գօրէա իմէրաթօրը մահպուտա պուլընիյօր տէսէք տօղրու տըր:

Վ Ա Գ Ա Ն Ս

Եաղ միւհաաիպէթի իլէ 15 կիւն գատար կազէթամըզ չըգմալաճագ տըր, վէ պու միւտտէթ զարֆընտա Պուրկապ-Ֆիլիպէ-Սօֆիա խաթթը իւզէրնտէ պիր գաշ գասապալարը կէզէճէլիլ:

Одговорникъ А. Курбетянъ

редакцията Д. Тодоровъ С. не—В. не



ԺԱՄԱՆԱԿԱՆ ԹԵՄԵՐԻՆԵՐԸ ԿԱԶԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգո, Ժընէվի և Պուրքալի ցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգիւներ ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամացոյցի գործարանը «ՕՄԵԿԱ» իրօք իր անունը արգարացուցած է իբր ճարտարարուեստը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող հաստատութիւնը:

Այս հոգաւոր Գործարանին ներկայացուցիչն է Տ. Կալոթ Թօսպըրդեանի վաճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ, արծաթեայ և պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. Գիւնըրը ԶԱՓԱԻՌ:

Կր գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավաճառներու եւ ժամացարձներու քով:

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԹԵՄԵՐԻՆԵՐԸ ԿԱԶԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ